

գարձեալ որպէս զի մենք հնամուլ կամ գրա-
բարամիջ անուանուելու պատուէն զրկուինք,
զեռ աւելի պարզ խօսելով, կ'ուզենք ու կը
փափաքինք որ աշխարհաբար գրականութեան
ներկայացուցիչներն չըլլան միայն մի քանի
լրագիրներ, հանդէսներ և կիսկատար վէպեր
և դատագրեր, այլ մեր վերոյիշեալ զրքերը:
Այլ եւս նոյն իսկ զբարբառմովը բմբռնած
է որ ի զուր է ընդդիմադրել աշխարհիկ լե-
զուի հոսանքին, քանի որ այն է անուս և
ուսեալ դասակարգին գործածած և հասկա-
ցած լեզուն. ի զուր է պայքարներ մղել,
վասն զի ֆասը ժողովուրդ դասակարգին կը
զպչի. հարկը կը ստիպէ տեղի տալ. այլ եւս
միաբան գործունէութեան պետքն կը զգա-
ցուի. անցեալը մեզ վկայ, որ աշխարհա-
բարամիջը ինքնուրոյն գրականութեան մը
փայլ մը, մեծ զարկ մը չի կրցաւ տալ, այլ
նորէն գրաբարեաններու վառարաններէն լոյս
ցայտեց նոյն խաւար գրականութեան մէջ.
մասնադէմ աշխարհաբարեաններ զիստութիւն-
ները չի կարողացան ժողովրդեան մէջ ծա-
ւալելու. բայց գրաբարեաններու դասակար-
գէն ամէն ճիւղի զրքեր աշխարհիկ լեզուով
հրապարակ ելան. հրատարակութիւններ,
որոնք անտարակոյս բուն մասնադէմներէ
եթէ պատրաստուէին, աւելի յատուկ արժա-
նիք մը կրնային ունենալ:

Ուրեմն մեծ պարտք մը կը ճնշէ ո՞նէ
հրատարակչական հաստատութեան վրայ.
պարտք մը, որ կը ստիպէ հրատարակիչ
զրքեր, որոնք ժողովուրդ հաստատութեան
մէջ, մտքի զգարի բարեշրջում մը կարենան
առաջ բերել. զրքեր՝ որոնք կարենան ներշնչ-
չել քերթութեան՝ վսեմը, բարձրը և ձգողը.
զիստութեանց՝ ամենէն օգտակարը և ժողո-
վրդականը. պատմութեան՝ ամենէն բա-
րնորոգիչը, ցնցողը և սթափեցուցիչը:

Եւ բմբռններ որ մեր հրատարակչական գոր-
ծը ոչինչ է, եթէ այն հատարակաց համար չէ:
Խառլիսյ երգիծաբան քերթութեան ստեղ-
ծիչն Ճիւսպէրէ Ճիւսպէրի շատ իրաւամբ
կ'ըսէր.

*Il fare un libro è meno che niente
Se il libro fatto non rifà la gente.*

Այս ոչինչ է այն զիրքը որ ժողովրդեան
կրթութեան, զարգացման, առաջնորդութեան
և մշակման համար չէ: Եւ այսօր եթէ մեր
մամուլը հրատարակութիւնները մանրամասն
քննենք՝ արդեօք ճշդափ անպէտ, անհամ
զրքեր պիտի գտնենք . . .

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ



ԱՐԵԱԼՈՅՍ ԵՒ ԱՐԵԻԵԼՔ

ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

(շար: տես էջ 6)

ԺԳ.

Վախճան Հալաճանաց եւ Հալաճայց.

Տրդատ կոփահարէ գիւլածիչն

Մաքսիմիլիս:

ՅԻՇԱՏԱԿՔ Սուրբ Նախատակաց կըր-
նան զմեզ շատ հեռացընել մեր նպատակէն,
եթէ ուզենք յերեւան հանել այլ եւս անոնց
նմանք. այլ բաւական համարուի այսչափս
իրեւ ժողովի փունջ մի կարմրուկ ծաղկանց,
նոյի Գրիստոսի և ապա իրենց արեամբ ու
ազուած դրսիստին. որ և համեմատութեամբ
իրենց բազմութեան՝ և ոչ իրեւ մի ի հա-
զարաց և երկու ի բերուց է. զի այդ քրիս-
տոնէութեան առաջին երկից դարուց տասն
այլեւայլ անգամ կրկնուած հալածանաց ա-
տեն, ի Ներոնէ մինչեւ ի Լիկինիոս, համա-
րին քննիչ վկայաբանք իրեւ տասն ու մէկ
միլիոն մարտիրոս եղած. որպէս զի, հաշուէ
Սուրբ մի (Լիկուորի) տարուել ամէն մէկ ու
բուն 30.000 հոգի կ'ըլլայ. իսկ այս վերջին
կամ Գիտկոտիանոսի կոչուած հալածանքն
ամենէն արիւնահեղն ըլլալով, աւելի այլ բազ-
մաթիւ պիտի ըլլան վկայքն: Նոյն համեմա-

տութեամբ և մեր Հայոց աշխարհին բու-
լորտիքը նախատակուողք. որք իբրեւ ոսկե-
փայլ մահիկ մի պատէին զսա՝ ի Հիւսիսոյ
յարեւմտից մինչ յարեւմուտս հարաւոյ. մինչ-
դեռ հեռուանց յարեւելից այլ Սասանեանք՝
ոչ սակաւս նախատակէին. այնպէս՝ որ մեր
նախնեաց աչքով մեր այդ չորս բոլորը նայե-
լով, կըրնամք՝ կամ պէտք է ըսենք Պօղոս
Առաքելոյ հետ (Երր. ԺԲ). « Այսուհետեւ և
« մեր որ այսչափ շուրջ գմեռք մածեալ ու-
« նիմք զքաղաքիս վկայից, զՀայաստանիս
« զամենայն ի բաց ընկեսցուք (չՀպարտա-
« նանք պարսպ պարծանօք) և զմեզ կարե-
« ւորս. (այլ) համբերութեամբ ընթացուք ի
« պատերազմ որ առաջի կայ մեզ » : (Հիկու-
ժամանակիս այլ, և այս տողերը գրելուս ա-
տեն, միթէ՛ այն սուրն՝ որ սկզբան չորրորդ
գարու մեր չորս դին հնձեց և մեզ խնայեց,
հիմայ ընդհակառակն՝ չորս դի հանաբար ըլ-
լալով, զմեր ազգայինները չի՛ հնձեր ի Փ.
և ի Մ. Հայս, ոչ սակաւ բարբարոսաբար և
աւելի խարդախութեամբ)... Բայց ո՞ր թուի
գրիչս... սանձենք զսա. այլ զսիրտ ո՞վ կըրնայ
սանձել. ո՞վ անոր ներքին հառաչանքը իղդել՝
եթէ բերանը կարկին, և արտասուք ցամքին.
Ո՞վ երկայնամիտ և ամենագետ Աստուած :

Տարբեր տեսութեամբ այլ՝ որչափ խղճալի
և արտաբերական յերկրի, այլ քնչ պայծառ
և գերագոյն յերկինս, նա և յերկրաւոր եկե-
ղեցւոյ, այս վկայիցս Քրիստոսի. յաղթողա-
գոյն նախատակ և գերագոյնք ի Սուրբս...

Արքայութեան և պատմական օրինօք և
կարգաւ՝ վայել է որ նայինք հիմայ, ո՞ր յան-
գեցաւ այդ չորից և վեցից միաբանեալ կա-
սեցաց վառած Հալածանաց կրակն, և քնչ
եղան բռնկընտղեն. — Յիշեցինք որ Դիոկղ.
գուցէ կակղագոյնն ի զազանացեալսն՝ այլ
չարեացապարտն քան զամենեւին, հրձիգ
լահը թողով աղմուկին մէջ՝ վատ վատ քա-
չուեցաւ ի Դաղմատիա. իր աթոռակիցն Մաք-
սիմիանոս բռնադատեցաւ կամայ ակամայ
նայնպէս հրաժարելու. այլ թագին հետ թոյնը
ժառանգութիւն թողով գուցէ քան գինքն
անգութ Մաքսենտ որչափն. զոր՝ յետ եօթն
տարւոյ՝ երկրաւոր և երկնաւոր զօրութեամբ
լախախեց Կոստանդիանոս (28 հոկտ. 312).
քնութիւնն այլ կարծես չկարենալով կրել ա-

նոր փախտական զօրաց ծոնրութիւնը, կա-
մուրջը կոտորելով ընկղմեց զինքն այլ անոնց
հետ ի Տիրեբրիս գետ, Հռովմայ պարսպաց
ներքեւ. ուր՝ երկրորդ օր մտաւ յաղթողն՝ և
քրիստոնէական ազատութեան առաջին հրո-
վարտակը հռչակեց — Սեւերոս (Բ) արդէն
սպանուած էր (307) այդ իր ցեղատիեզր
թագակցէն : Յիշեցինք Գալերիոսի մահն (1
մայիս, 311), Անտիոքոսի նման որդնա՛յար
զուր զղինօք, և իր վատթարագոյն որդւոյն՝
Մաքսիմիանոսի՝ յալորդելն չարագոյն եւս վար-
չութեամբ. որոյ պակս եղաւ՝ մեր ազգիս նկատ
մամբ պանծալի՝ իրեն համար ամօթալի գործն :
Գրեթէ նոյն Կոստանդիանոսի ի Հռովմ Մաք-
սենտի վրայ յաղթանակելուն ատեն, (զոր
Թուի դեռ յյսած) Մաքսիմիոս՝ Տրդատայ
զՀայաստան քրիստոնէոյ ընկղմէ՛ Հռովմէա-
կան քաղաքավարութեան հակառակ և օր-
գեղք կանգնելուն՝ այլ եւս չկարենալով համ-
բերել, յարձակեցաւ ի Հայս. ոչ այնքան
արեւելեան գոռոզ մի նուաճելու համար, որ-
քան անոր և ազգին քրիստոնէութիւնը զսպե-
լու. որոց ազատութիւնն՝ իր և իր կայսերա-
կըցաց բանակաց մէջ գանուող մեր ազգային
ները խլրտեցընէին. Եկեղեցական պատմու-
թեան մէջ այս առաջին անգամն է՝ որ քրիս-
տոնէութեան պաշտպանութեան համար՝ քրիս-
տոնեայ տէրութիւն մի և թագաւոր մի՛ պա-
տերազմի անքրիստոնեայ տէրութեան, և
հռովմէական տէրութեան լիզէճնից հետ, և
յաղթէ. Յաղթողն այլ է 30 տարիէ վեր գալ-
նակիցն կայսերաց, Տրդատ. զոր զրգոցին՝
անոնց նախ անգթութիւնն, և յետոյ այս
Դաժմանի անմոռութիւնն. որ Տրդատայ Հակա-
յազոր թաթով չարաչար կոճաւհարուած՝ գըլ-
կակոր ամաղապարծ եղաւ կոտորած բռնա-
կովը : Որոյ համար կըրնար Տրդատ՝ փոխա-
նակ անոր (Գալերիոսի) իր դրամը վրայ
գրիքը նա և Armeniaeus անուանելուն, ա-
նուանել զինքն՝ զատ յայլոց us և ius յաղ-
թանիչ մակղաց՝ նա և գերագոյն պանծա-
նօք՝ Romaniacus բայց Տրդատայ մեծագոյն
պարծանքն էր Cristianus ըլլալն, և յետ
լսելու Կոստանդիանոսի կրկին տեսակ յաղ-
թութիւնը, կրկնել և հաստատելն անոր հետ
նոր Դաժնակցութիւն մի :

Սակայն Կոստանդիանոս դեռ չէր քրիս-

տոնեայ, և ոչ ի պաշտպանութիւն քրիստոնէութեան ըրաւ իր յաղթութիւնն ի Հուովմ. իսկ Տրդատ՝ տարբեր պարագայիւ. զոր չգիտեմ ի՞նչ գրելով, ի՞նչ պաշտով գրելու է, թէ եկեղեցական և թէ մեր սգգային պատմութեանց մէջ: Եւսերիս՝ որուն լուսութիւնը տեսանք մեր ազգովին քրիստոնէութեան դէպքի մէջ, յայտն գիպուածի եւս համառատ՝ բայց բուսական յիշէ (Թ. Ը) Դաժանին կորահըք. « Գարեաւ (Կ'ըսէ) ի վերայ նորա՝ անօրէն « իշխանին Պատեհրազմն որ առ Հայան եղեւ. « աղք. որ ի սկզբանէ բարեկամք և օգնականք « Հոսոմոց էին. նոքա չքիստոնեայք էին, և « զերկրպագութիւն Աստուծոյ՝ փութապէս « պնդութեամբ կատարէին, իսկ այն սա ա- « տելի Աստուծոյ՝ կամէր. նեղել զնոսա՝ զի « զոհեցնեն Սոսոց և զիւսաց թշնամուոց. և « փոխանակ բարեկամաց ի մարտ պատերազ- « մի յարոյց զնոսա ընդդէմ իւր... Արդ նա « հանդերձ դարձաւ իւրովք ի պատերազմի անդ « որ ընդ Հայան եր՝ կոսկան լինէր »:

Եւսերեայ Հետեւող եկեղեցապատմութեւ, Նիւ կեփոր Կայլիստո (Է, ԻԸ) քիչ մ'աւելի լայն գրէ. իրմէ վերջ՝ Յայանութեան գրոց մեկ. նիշն (զոր թարգմանած է Նիւս. Լամբրոնացի), Սնդրեաս կրեոսացի, ըստ ոմանց Սնդրեաս կեանարացի, երկուքն եւս յ'Ը դարու, Կ'ըսէ (Գ. ԺԶ). « Ընդարձակ պատմէ « Եւսերի (երանի՝ թէ) ի նոյն յովութեանդ « բանն, թէ ի վերայ Հովմայեցեոց յարեան « Հայք, և գրագումս սատակեցին, և զսակաւ « կերակուր՝ բոգումս ոսկւոյ՝ ի սաստկութե- « նէ ուղոյն՝ զնէին »: Ասկէ առաջ Եթովպոցի եկեղեցական պատմիչ մի (Նիքիոս) յիշած է այս դիպումս, թէ Դաժան՝ նախ յաղթութեան ի Հայոց, յետոյ պատժեցաւ յԱստուծոյ՝ ցաւօք: Աւելի ապշելի է մեր պատմընաց լուսութիւնն, կամ ցաւալի՝ գրուածոց կորուստն. վասն զի, գիտնալու է որ, գրեթէ ապահովապէս այդ ժամանակ շատերն գրած են Հայոց երկրին հրաշալի և պէսպէս

զիպումները. սակայն իւրաքանչիւր գրող մեր այն ընդարձակ երկրին մէջ՝ միայն իր յատուկ գաւառի կամ կողմի դիպումները գրած է, և Լուսաւորիչ այս աշուպէս ուզեր է որ ըլլայ, իր գգուելութեամբ կամ խոհմանութեամբ, ինչպէս Կ'իմացնէ ժամանակակիցն Չնոմը. սա խնդրեց ընդարձակօրէն գրել այն բաները, բայց Լուսաւորիչ չհաւանեցաւ. և ինքն միայն իր վիճակին մէջ ի Տարսն եղածը գրեց: Սակայն պարագայ մի իր՝ սահմանաց մօտ հանդիպելով, անտարակոյտ Կ'երեւի որ այս մեր խնդրածն Կ'աւանդել է երբ Յունաց՝ յարձակմունքը յիշէ ի հիւսիսոյ, նոյն ժամանակ և արեւմուտքէն երեւնալով զօրացն Յունաց. « Եւ իբրու տեղեկացաւ (Տրդատ) եթէ Յունաց « նաց զօրքն էին, դարձաւ ի գուտան Հաշ- « տենից, և եկն բանակեցաւ ի զուխս Արձա- « նին՝ վասն ընդարձակութեան վայրացն ». այն տեղ՝ ուր տոսն տարի առաջ՝ երբ նոր դարձաւ Ս. Գրիգոր ի Կիտարիոյ, մեծ պատերազմն եղաւ, իբրոց՝ իրենց Գեմեային և Գիսանէսը պաշտպանելու համար, Հայոց՝ իրենց նոր ճանչցած Քրիստոսը. որոյ համար իրենց պատերազմի արեամբ մկրտուեցան. և երբ երկու կողմէն այլ իրենց կէս քրիստոնեայ կէս Հեթանոս կոտորած մարմինները հաւաքելով միատեղ թաղեցին, և վրան յիշատակի տրան կանգնելով՝ չորս զանազան լեզուով և գրով գրեցին. « Չայս պատերազմս « արարաք վասն Գիսանէի կոց և վասն Քրիստոսի »: Յարմար գրուած՝ այն երկու կրօնից և մտաց դեռ խառնակութեան ժամանակին: Այս տեղէն սլացած իջած զարկած և հաւածած է Տրդատ զԴաժան Մաքսիմինոս. իսկ սա իր յաղթութեան վրէժն հաներ է իր քուրմներէն, յարդելով զանոնք, իրեւ զինքը խաբուներ: Փոխանակ զգաստանալու այս հարուածէն, Մաքսիմինոս աւելի մեծ բանի ակնկալութեամբ՝ զամենն այլ կորուս. երբ Լիկինիոս յարեւմուտս գրադած էր Կոստանդիանոսի քոյրը կին առնելով, Դաժան

1. Այս բանս յիշէ և եկեղեցական պատմիչն, Hagmo (Ը, 9). Կաթիկոսոս Հաղեքշտաթի Ի Կես Թ գաւառս՝ Rebellant Armeni, prius amici Romanorum, propter nefaria ejus (Maximini) dicta. Quorum

in bello et ipse turpiter fugatur, et exorcitus interit ense. Tunc sacerdotes deorum suorum et divinos quorum responsis bella moverat, interfeci jubet, tanquam fallaces.

ուզեց առոր իշխած երկիրներն այլ գրաւել
և միաճեման ինքնակալ ըլլալ ։ Լիկինիոս
լսելով զայս՝ անկարծելի արագութեամբ հա-
սաւ զարկաւ զնա . որ փախչելով ինչուան ի
Նիկովոդիա (մայիս, 313) անկէ խլի Տար-
սոն, հօն մեռաւ (յօգոստոսի) շարաշար ցաւօք
և անտիդոսեան անօգուտ սարկանօք՝ ըրած
անգթութեանց և այնքան անմեղ քրիստո-
նէից արիւն թափելուն համար ։

Մնաց ասպարէզն իրեն յաղթող հակառա-
կորդին, որ անոր պէս փափագէր ինքնագլուխ
կայոր ըլլալ Հռովմայեցոց . բայց ի սկզբան
կոստանդինոսի հետ ըրած խնամութեանն,
միանգամայն և վախուն պատճառաւ, ինքն
այլ հրատարակեց ի Նիկովոդիա (13 յունի-
սի, 313) ազատութիւն քրիստոնէից . այլ քիչ
վերջ երբ տեսաւ որ կոստանդինոս զբա-
ղած է յիտալիա, ուզեց անոր վիճակած եր-
կիրներէն կորզել . կոստանդինոս վրայ հա-
սաւ, և նախ Դանուբեան գաւառաց կողմերում
յետոյ ի Թրակիա պատերազմելով՝ զսպեց
զնա, և վեհանձնաբար ներեց, և նորէն ի-
րենց տէրութեան սահմաններն որոշելով և
հաստատելով (8 հոկտ. 314) իրարմէ զա-
տուեցան ։ Սակայն այն Խորենացի կնքած
սեւաներկ մօրուօք սեւասիրտ աշեւորն, որպէս
« Ընձու անկարելի է զխայտուցսն փոխել և
« Եթովպացւոյ զթիտութիւն, նոյնպէս մար-
« զոյ ամպարչախ... զբարսն... ցրտացեալ
« սիրոյն Տրդատայ մեր թագաւորի՝ ակն աւ-
« ծէր որպէս արդարեւ ի թշնամոյ » ։ Իր
նախորդ կայսերաց ճամբէն և գործէն յետ
չկեցան . տարի մի վերջ (315) զՎալերիա
Պրիսկա՝ զուստր Դիոնղիսիոսի՝ կին Վալերիոսի՝
մօրն հետ սպաննել և ծովընկէց ընել տուաւ .
յետոյ զաղտնի և յայտնի հալածանք հասնեց
քրիստոնէից և շատեր նահատակեց, յորոց
մի քանին քիչ առաջ յիշեցինք, և որոց կար-
գէն են բաղմաթիւս շինարարական Հայք, որոց
քրիստոնէութիւնն իրեն դէմ երկաթէ աւե-
լի խոցորիչ էր : Վերջապէս այն խաբէական
զուճով թեթեւամարդ զուլիսը նորէն կանգնեց
ընդդէմ յայտնի քրիստոնէայ հռչակուած
կոստանդինոս կայսեր . և նախ յԱլեքսանդու-
պօլիս (3 յուլ. 323) հարուած մ'առաւ, յետոյ
նոյն տարին, (18 սեպտեմբ.) կոստանդին
նոր ընտրած քաղաքին դիմաց՝ ի Խրիստիպօ-

լիս (Իւսկիւտոք) շարաշար դարձուելով և
տեղէ տեղ փախչելով, քանի մի ամիս
վերջը (16 մայիս, 324) ի Թեսաղոնիկէ՝ յաղ-
թողին դատաստանաւ և իր կամ օտար ձե-
ռօք խեղդամահ կորաւ . ըստ ոմանց Յ(ա)-
մեայ, այլ հաւանորէն ըստ այլոց ծերագոյն
եւս . և իմով բոյորովին փշրեցաւ այդ քրիս-
տոնէից ջնջուելուն կամ նուազելու վճիռ նե-
սող վեցերես քուէն ։

Լիկինիոսէն առաջ հալածող չորս կայսերքն՝
գրեթէ մէկ մէկ տարի իրարմէ ետեւ կորան,
շատն զիրար սպաննելով գրեթէ . անոնց ա-
մենուն խայտառակ խաղն ու կորուստը լսե-
լով Դիոնղիսիանոս իր կամայ ակամայ՝ Դե-
սորանաց մէջ, անոնց ետեւէն անցաւ զնաց
(մայիս, 313) իբր 68ամեայ ։

Ինչ եղաւ այդքան խրոխտ ինքնակալաց՝
ամենայաղթ համարեալ Լեգէնաց տէր, ա-
խարհիս չորս անկիւններն ոտից տակ տռնող-
ներու զօրութիւնն, սպառնալիքն, հարստու-
թիւնք, յաղթանակք, փառք, վայելք, աւել-
ցըննք նա և անգթութիւնք և պղծութիւնք ։

Դանիել մարգարէի տեսած բարձր ու լայն
լիբան պէս կանգնած ատեննին՝ փորձիկ քար
մի փրթաւ, զարկաւ կործանեց . խաւն . զօրոյ
նշան՝ համեմատ ի տեսեան իրեն երեւածին՝
կոստանդինոս կարեց կոպեց իր կապեր-
տակին վրայ (Labarum), և քանակացն առ-
ջեւէն տանելով՝ միապետեց երկրի, որչափ որ
երեք չորս դարերու աշխատանք և անթիւ
մարդկան կոտորածով նուաճեր էին իր նա-
խորդ կայսերք . և աւելի ստոյգ կերպով փա-
կեց զտաճար (հաշտութեան) Յանոսի, և հա-
մարձակն բացաւ զԵրեսուսին — Համաշխարհ-
հական մեծ իր մ'է այս ի պատմութեան և
ի մարդկութեան . որոյ՝ ըստ չափու տարա-
ծութեան երկրին՝ փոքրագոյն՝ բայց երեցա-
դոյն նկարագիր և նախորինակ եղած էր,
անկէ տասն և քսան տարի ձուռլ, մեր Հայաս-
տան հայրենիքն ։ Եթէ եկեղեցական կամ
կրօնական մեծ և յայտնի դիպուած մ'է Հայոց
քրիստոնէութիւնն նախ քան զազատութիւնն
կոստանդինիան, ոչ սակաւ նշանաւոր քաղա-
քական դէպք մ'է և խրատմն Հայոց՝ հոգով-
մէական ձեռնաց տակ . և սոցա չհամարձա-
կելն կամ զգուշանալ ի զրգուելոյ զՀայս . մա-
նաւանդ զի, ինչպէս յիշեցինք, կայսերաց զօ-

րազնդից մէջ այլ կային քրիստոնեայ Հայք. և այս այլ ոչ փոքր տո՞րթ մ'եղած է, մա- նաւանդ յետ կոփանաց Դաժանին, Հոռմէա- կան վարչութեան կերպ մի յեղափոխութեան և ետք կենալու յաշխարհակալութենէ, Գու- ցէ այս ըսածս ոմանց աղգասիրական եռանդն և պարծենկոտութիւն երեւի. այլ դարձեալ պնդեմ, թէ, ոչ քաւական նկատուած այլ նկա- տելի կիտ մ'է այս, յեկեղեցական և քաղա-

քական պատմութեան Հռովմայեցւոց ժա- մանակին... և թէ, Տրդատայ անկախ և ազա- տօրէն վարուիչն՝ անոնց վարչութեան կշիռքը չեղեց շփոթեց. իսկ երբ Կոստանդիանոս միապետեց և քաղաքավարութիւնը լծորդեց քրիստոնէական կրօնից՝ բոլորովին կերպա- րանափոխ եղաւ տիրապետութեան օրէնքն և կերպն:

Շարայաբեղի


Հ. Ղ. Վ. Մ. ԱԼԵԿԱՆ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՂԲԵՐԱՅ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ե Ի

Պ. Մ. Ն. ՄԱՌԻ ՄԻ ԿԱՐԾԻՔԸ

Ա. — «Վարք Որդոց և Թոռանց Ս. Գրիգորի»:



ՈՓԵՐԱՑ Ի. Հատորին 47-56 էջերը կը գրուէ գրութիւն մ'այս խորագրաւ. «Պատմութիւն վարուց և նահատակութեանց երջանիկ Հայրապետացն Արիս- տակիսի, Վրթանիսի, Յուսկանի, Գրիգորիսի, որդոց և թոռանց որոյն Գրի- գորի»:

Այս գրութիւնը իսկոյն ընթերցողին հետաքրքրութիւնը պիտի շարժէ, այնու՝ որ յան- կարծական վերջաւորութիւն մ'ունի, և ոչինչ չէ նշանակուած հեղինակին և ժամանա- կին նկատմամբ:

Յայտ է թէ ո՞ր և է քննութեան մէջ զատոնք գտնելու համար սրշափ կարեւոր է քննել գրութեան մ'աղբիւրները: — Արդ՝ այս գրութիւնն ուրիշ բան չէ բայց եթէ հա- տուած մը Յովհան կաթողիկոսի պատմութեան, ինչպէս պիտի ցուցնեմ այժմ ներկայ համեմատութեամբ:

ՎԱՐԿ ՈՐԻՒՈՑ ԵՒ ԹՈՐԱՆՑ

ՅՈՎՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Արդ յեօթն և ի տասներորդ ամի ար- քայութեանն Տրդատայ՝ նստաւ յաթոռ սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի և Թապէսի, սրբութեանցն գտեալ քահանայադորձող և ծնող մեր ըստ աւետարանին և նախահայր աստանօր արտադրելով. Յետ այսորիկ ապա գնացեալ եւս ընդ արքային Տրդատայ յառ- տուածակարգ կայսրն Կոստանդիանոս բազ- մօք իմն Խնազելի և վայելուչ մեծարանօք պատուէ զսուրբ Հայրապետն իբրեւ զկենդա-

Արդ յեօթն և ի տասն ամի արքայու- թեանն Տրդատայ՝ նստաւ յաթոռ սրբոց ա- ռաքելոցն Բարթողիմէոսի և Թապէսի, սրբ- րութեանցն գտեալ քահանայադորձող և ծնող մեր ըստ աւետարանին և նախահայր աս- տանօր արտադրելով. Յետ այսորիկ ապա գնացեալ եւս ընդ արքային Տրդատայ յառ- տուածակարգ կայսրն Կոստանդիանոս բազ- մօք իմն և վայելուչ մեծարանօք պատուէ զսուրբ Հայրապետն իբրեւ զկենդանի մար-